



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Սարգսիյան Էջեղրի

4166

Գրքակալի Կարճակ

1878

891-71

U-13

Թ: 1891

2003

891. 71-3

U-13

Handwritten signature

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՇԻ

Թ Ի Ֆ Լ Դ Ս
1891

891.71-

U-13

Աստվածատու - ՇՁԵԳՐԻՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ



1002
5648

9-



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՕՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Գորգիձ. պր. և Քարենյան. փող. տանիք:

1891

I

Օրիորդ Աննա Գուբինա գիւղական վարժուհի էր։ Արդեօք վարժուհութիւնը նրա սրտի ուզած պարամունքն էր, թէ վարժուհի դարձաւ, որովհետեւ ուրիշ գործ չըկար.—այդ նա ինքն էլ լաւ չըգիտէր։ Ստացաւ վարժուհու վկայական, ամսական 15 մանէթով մի տեղ բացվեց, նա էլ վերցրեց վարժուհի մտաւ։

Աշունքին, երբ ուսումնարանները պէտք է բացվէին, նա ճանապարհ ընկաւ գիւղը։ Նրան տաւրան ուսումնարանը ցոյց տուին։ Նրա բաղտիցը ուսումնարանին կպած մի բնակարան կար վարժուհու համար—մի սենեակ, հետն էլ մի պտտիկ խոհանոց։ Թէ չէ պատահում է, որ վարժուհին հերթով մի շաբաթ այս գիւղացու տանն է ապրում, միւս շաբաթ այն գիւղացու տանը, այնպէս որ վարժուհու բնակարանը դառնում է մի տեսակ հարկ գիւղացիների համար։

Ուսումնարանի շինութիւնը մի ընդարձակ շինութիւն էր։ Այդ տեղ մի ժամանակ, երբ գիւղացիները դեռ ճորտեր էին, ապրում էր կալուածատիրոջ կառավարիչը։ Վերջումը կալուածատէրը այդ շինութիւնը գիւղացիներին նուիրեց, որ այնտեղ ուսումնարան բանան։ Ճշմարիտ է, աշակերտների տե-

Дозволено цензурою. Тифлисъ, 4 апрѣля 1891 г.

Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар. ул.

ղը լէն ու բօլ էր, բայց շինութիւնը շատ հին էր. գիւղացիք էլ վաղուց չէին նորոգել, այնպէս որ վառարանները ծուխ էին անում, օճորքից կաթում էր, ճեղքերից էլ փչում:

Ուսումը շատ թեթեւ էր,—կարդալ, գրել, մի քանի տեղեկութիւններ քերականութիւնից, թուաբանութեան չորս գործողութիւնը, կարճառօտ սըրբազան պատմութիւն,—և ուրիշ ոչինչ:

Ուզում էին, որ երեսօն մի, շատ շատ երկու տարումը ամեն բան սովորի, պրծնի: Ուսման ծրագրի վրա հսկողը գիւղի քահանան էր: Նա պէտք է լաւ հսկէր, որ ծրագիրը կիսատ պաւտ չ'անցնեն, և որ գլխաւորն է, մէջը նոր բաներ չը մտցնեն: Հոգաբարձուն՝ գիւղի տանուտէրն էր: Իսկ ամենաբարձր հսկողութիւնը տուած էր կալուածատիրոջ ձեռքը, որը միշտ արտասահման էր ապրում, և մի քանի տարէնը մի անգամ միայն՝ գալիս էր իր կալուածքը ակ տալու: Ուսումնարանում միայն տղաներ էին կարգում:

Օրիորդ Աննայի գործերը շատ էլ շուտ կարգի չ'ընկան: Գիւղացիները չէին սպասում, որ վարժուհին այդպէս շուտ կը գայ. դպրոցի շինութիւնն էլ կարգի չէր բերված: Դեռ աշակերտները չը հաւաքւած՝ ծնողները սկսեցին գալ ուսումնարան և ուշադրութեամբ տնտղել նոր վարժուհուն:

—Աստուած սիրէք, երեսօնների ուսումը շատ էլ չ'երկարացնէք, ասում էին ծնողները.—գրել, կարդալ, հետն էլ մի քիչ հաշիւ որ իմանան՝ հերիք է

մեզ համար: Ով է ասում, ինչ որ հարկաւորն է, պէտք է իմանան. միայն թէ աւելորդ բաներ չըլինեն: Տանը հազար ու մի գործ կայ. երեսօնները մեզ հարկաւոր են: Իսկ ով որ ծուլութիւն կանի, նրա սիրտը դող պէտքէ գցել: Ա՛յ, տեսնում էք, անկիւնի ճիպոտներն էլ հէնց դրա համար են: Ե՛հ, գիտէք էի, ինչ երկարացնենք:

Մի կերպով, օրիորդը քիչ քիչ սարք ու կարգի դրեց իր գործերը՝ թէ տանը և թէ ուսումնարանում: Նրա սենեակում դրեցին, կահկարասիքի փոխարէն, մի կոպիտ, գոյն չը տուած սեղան, և երեք հասարակ աթոռ: Անկիւնում դրած էր մահճակալը, որը մի ժամանակ պատկանում էր կալուածատիրոջ կառավարչին: Պատին խփած էր մի քանի մեխ, որոնց վրա օրիորդը կախեց իր շորերը: Ուսումնարանը ունէր մի ծառայ, որը վառում էր վառարանները, երեկոյեաններն էլ՝ սրբում դասատուներ: Մնում էր կերակուրի բանը: Օրիորդը հարց ու փորձ արեց ու իմացաւ, որ իրանից առաջ եղած վարժուհին, մի թեթեւ վճարով, ճաշը քահանայի մօտ էր ուտում, իսկ տանը միայն թէյ էր խմում: Քահանան ուրախութեամբ վիզ առաւ սրան էլ ճաշ տալ:

—Չը կարծէք թէ փող աշխատելու համար եմ անում, ասաց նա. Աստուած ոչ անի: Դուք էք մեղքըս գալիս: Ո՞վ պէտք է ձեզ համար կերակուր պատրաստի: Մեր գիւղը մի այնպիսի գիւղ է, որ կերակուր չէ, ցամաք հացն էլ դժուար կը գտնէք: Զաշի համար շատ չենք վերցնիլ,—ամսական

Հինգ մանէթ: Մեծ մեծ բաներ չեն խոստանալ, բայց քաղցած էլ չենք պահել: Կը գաք կը գնաք. դուք մեզ կը ճանաչէք, մենք ձեզ: Ձեզ համար էլ ուրախ կը լինի, մեզ համար էլ: Եթէ բան է, մի դժուարութեան կը հանդիպէք, ճաշի ժամանակ խելք խելքի կը տանք և մի ելք կը գտնենք: Միասին ապրենք, սիրով ապրենք, — ահա իմ սրտի ուզածը: Եթէ դուք բաց սրտով կը գաք, ես էլ իբրև քահանայ՝ աւելի բաց սրտով կ'ընդունեմ: Բայց մեղքս ինչ թագցնեմ, բաց կասեմ. — ձեր գործը հեշտ գործ չի, ժամանակ ժամանակ մեծ արգելքների կը հանդիպէք: Մեր ժողովուրդը կողը հաստ ժողովուրդ է, անհաշտ և խստապահանջ: Տեղից վեր կացողը մի բան կասի ձեզ, մի-մի անգամ էլ այնպիսի բան, որ սաղ մարմնով կը փշաքաղէք: Օրիորդ Մարիամը, նա, որ ձեզանից առաջ վարժուհի էր, ես օլա չը գնաց Վասիլ Դրօզդի հետ, և հազիւ հազ կարողացաւ այստեղից դուրս պրծնել:

— Ինչ մարդ է այդ Դրօզդը, հարցրեց օրիորդը:

— Հը, նա այս գիւղի խանն է: Խմիչքների առուտուր է անում: Ամբողջ գիւղը իր ձեռքն է առել: Իշխանութիւնն էլ նրա խաթրիցը դուրս չի գալիս: Տղան ուսումնարանում կարդում է: Ինքն էլ ուզեցել էր օրիորդ Մարիամին մի ընծայ տալ, սիրտը շահել: Օրիորդն էլ թարսվեց ու չուզեց: Այդ բանը, ինչ ասել կուզի, Դրօզդի սրտին դիպաւ: Սկսեց վարժուհու դէմ մատնութիւններ անել, և ինչ մատնութիւններ: Ել ուրիշ ճար չը կար. մնում էր վեր-

կենալ և հայդէ: Ուսումնարանների վարչութիւնն էլ չը պահեց, չը պաշտպանեց: Այժմ այդ օրիորդը քաղաքումն է. այնտեղ օգնական է մի կալուածատէր կնոջ, որը մի գիշերօթիկ դպրոց է պահում:

— Ինչպէս տեսնում եմ, ձեր գիւղացիք շատ խիստ մարդիկ են:

— Այն էլ ինչպէս: Միայն, ի սէր Աստուծոյ, մի բան չը մոռանաք. միշտ ժամ գնաք, եկեղեցուց լետ չը մնաք: Խորհուրդ եմ տալիս ինչպէս քահանայ, և զգուշացնում եմ՝ ինչպէս մարդ: Ինչպէս քահանայ ասում եմ՝ — միայն եկեղեցին կարող է մխիթարել մեզ աշխարհային դժբաղդութիւնների ժամանակ: Ինչպէս մարդ զգուշացնում եմ, որ ոչ մի մեղադրանք այնքան հեշտ հաւատալի և այնքան վտանգաւոր չէ, որքան այն, երբ մէկի մասին ասում են, թէ ժամատէր չէ, Աստուած չի ճանաչում: Ե՛հ, ասենք թէ հիմի կվանից մարգարէութիւններ անելն էլ մի բան չի: Եկել էք պրծել. բանը բանից արդէն անցել է: Ինչ կը լինի՝ կը լինի: Թող Աստուծու օրհնութիւնը ձեզանից անպակաս լինի:

Քահանան հին մարդ էր, բարի մարդ: Տէրտէրակինն էլ այդ կողմից պակաս չէր: Նրանց երեխաները օտարութիւն էին գնացել, այնպէս որ երկու հալեւորները՝ մարդ ու կին մենակ էին ապրում: Մարդն էլ, կինն էլ շատ աշխատասէր էին. առաւօտից մինչև երեկոյ բանում, քաշ էին դալիս: Մի կնամարդ էին պահում, որ իրանց օգնի: Տէրտէրը մինչև այդ ժամանակ էլ հողագործութիւն էր ա-

նում, այդ էլ ոչ թէ աշխատանքի համար, — աշխատանք որտեղից էր, — ալ որովհետեւ սովոր էր: Տէրտէրն ու տէրտէրակինը Աննային սիրեցին. նրան տեսնելով միտներն էին բերում իրանց որդոց: Այդ բանը սիրտ էր տալիս օրիորդ Աննային: Նա յոյս ունէր, որ նեղ ընկած ժամանակը այդ տան մէջ ապաստան և պաշտպանութիւն կը գտնի:

Օրիորդը հաշիւ էր անում ու տեսնում, որ եթէ ամսական 5 ռուբլի ճաշի տալ, ու 5 ռուբլի էլ մանր մունր բաների, էլի իր ռոճիկից ամսական 5 ռուբլի յետ կըզգի՝ սեւ օրվայ համար: Իսկ նրա համեստ կեանքի համար այդ էլ բաւական էր: Բնակարանը ձրի էր. որքան ոյժը պատում էր, սարք ու կարգի գցեց իր սենեակը, թէև օրը էլի մի երկու ժամ ստիպված էր սենեակից դուրս գալ՝ ածուխով չընկնելու համար: Հետը բաւական շոր էր բերել, այնպէս որ այդ կողմից ծախս չուներ: Տըխրութիւնից չէր վախենում, — ցերեկները ուսումնարան կերթար, երեկոյեանները կը պատրաստվէր միւս օրվայ համար, կամ կ'երթար քահանայի տունը՝ ժամանակ անցկացնելու: Քահանան հարեւան կալուածատիրոջ կառավարչից լրագրներ էր ստանում և ուրախութեամբ օրիորդին էլ էր տալիս կարգալու: Վերջապէս մի կերպով կապրէր, էլի:

Ուսումնարանը բացվեց: Մինչև քառասուն աշակերտներ հաւաքվեցին, որոնք ուսումնարանի մէջ միանգամից աղմուկ ու հարաւ-հրոց բարձրացրին: Աշակերտներից մի քանիսը արդէն մեծ մեծ տղաներ

էին, և բաւական լրբաբար նայում էին ուղիղ վարժուհու աչքերին: Առհասարակ աշակերտները հանգիստ չէին տալիս վարժուհուն. դասը ընդհատում էին, աղմուկ էին բարձրացնում, վայրենութիւններ էին անում: Իսկ օրիորդը այնպէս էր ցոյց տալիս, որ իբրև թէ չի նկատում, բայց միայն Աստուած գիտէ, թէ ինչ դժուարութեամբ էր կարողանում իրան զսպել: Հէնց առաջին օրը նրա գլուխը այնպէս սկսեց ցաւել, որ հազիւ կարողացաւ մինչև դասերի վերջը սպասել:

— Ինչ թագցնեմ, բաւական նեղացել էի ձեզանից, ասաց օրիորդը քահանային՝ ճաշի ժամանակ. — ինչ կը լինէր, եթէ առաջին օրը գալիք մի քիչ օգնէիք, սիրտ տալիք ինձ:

— Ես հէնց նրա համար չեկայ, պատասխանեց քահանան, որ դուք հէնց առաջին օրից իմանալիք թէ բանը ինչումն է: Միւսույն է, եթէ այսօր չիմանալիք, վաղը պէտք է իմանալիք:

Միւս օրը հոգաբարձու-տանուտէրը եկաւ ուսումնարան, որ իմանալ թէ աշակերտները հանգիստ են նստում թէ ոչ: Վարժուհին ասաց, որ այնքան էլ վատ չեն, և իհարկէ քիչ քիչ ամէն բան կարգի կընկնի:

— Ա՛յ, հիմիկվանից ասում եմ, դրանց երես չը տաք, թէ չէ աստուծն էլ կուզեն: ձիպոտներն էլ դրա համար են անկիւնում դրած: Ռօզգի որ տաք, ամէն բան լաւ կերթայ. — խորհուրդ տուեց և գնաց:

II

Դեռ երկու շաբաթ էլ չէր անցել, որ օրիորդ Աննան պատահեց «Թարսերից Թարսին», այն նոյն Վասիլ Դրօզդին, որը զիւղից քշել էր իրանից առաջ եղած վարժուհուն: Դրօզդը՝ առանց նազ ու թող անելու՝ մտաւ վարժուհու սենեակը, սեղանի վրա դրեց մի կապոց և ասաց.

—Մեր երեխան ձեզ մօտ է կարգում: Այ, սա էլ ձեզ ընծայ—մի կէս զրկանքայ թէյ է, շաքար և մի քիչ էլ քաղցրեղէն: Վերցրէք. Աստուած հալալ անի: Ահա, այս էլ երկու մանէթ փող:

Ասաց, հանեց զրկանից քսակը, միջիցն էլ երկու մանէթ և դրեց կապոցի կողքին:

—Սա թնչ է. այսպիսի բաներ անելը արգելված է, յուզված ձայնով ասաց օրիորդը:

—Ականջ մի դրէք. դուք միայն որդուս լաւ կարգացրէք:

—Ես առանց դքան էլ լաւ եմ պարապում: Հարկաւոր չի: Գնացէք այստեղից, խնդրեմ:

Այդ խօսքերը Դրօզդի սրտին դիպան: Նա գուռնատվեց:

—Դա իմ բարութեան փոխարէնն է, հա: Ուրեմն մեր բարեկամութիւնն էլ ձեզ դուր չի գալիս, ասաց նա, խէթ-խէթ նայելով օրիորդին ոտից մինչև գլուխ:

—Հարկաւոր չի, բացականչեց օրիորդը, բայց իսկոյն լեզուն կծեց: Նա միտը բերեց նախորդ վարժուհու գլխին եկածը: Միտը բերեց, որ Պետերբուրգում իրան ասում էին՝ թէ մեծամեծների հետ ընկնելը վտանգաւոր բան է, որ այս ինչ վարժու-

հուն դուրս արեցին զպրոցից, որովհետև կուել էր տանուտէրի հետ, կամ այն ինչ վարժուհին առանց տեղի է մնացել, որովհետև ուսումնարանական վարչութեան անդամի սրտոյնը չէ եկել:

—Գիտէք թնչ կայ, ասաց օրիորդը ձայնը ցածրացնելով,—ես առանց դրան էլ ձեր որդու հետ կը պարապեմ. հաւատացէք որ կը պարապեմ: Եթէ ուզում էք, թող երեխան ինձ մօտ գայ, որ դասերը սովորեցնեմ:

—Իսկ ընծան, չէք ուզում վերցնել:

—Գիտէք ինչ է, ես ձեզ մի աւելի լաւ բան ասեմ. ուսումնարանի վառարանները ծուխ են անում, օծօրքից կաթում է, այ, դրանք շինեցէք:

—Դա ինչ իմ գործն է, դա զիւղի գործն է: Կարծում էք քիչ ծախս կուզի այդ բոլորը: Գիտէ՞ք, թէ ինչ կը նստի մի վառարան շինելը: Բայց թնչ եմ երկարացնում. մնաք բարով:

Ասաց, հէնց սենեակի մէջ գլխարկը դրեց զըլխին, վերցրեց սեղանից՝ իր բերածները և դուրս եկաւ: Օրիորդը մի քանի վայրկեան մտաւ մտնելու մէջ ընկաւ, բայց երկար չը դիմացաւ, լետեւից վագեց, փողոցում հասաւ նրան և ասաց.

—Մի բարկանաք, ի սէր Աստուծոյ: Ախր մեզ արգելված է այդպիսի բաներ վերցնելը: Երեկոյեաները ուղարկեցէք ձեր որդուն, ես նրա հետ առանձին կը պարապեմ: Ել թնչ էք ուզում:

Դրօզդը մի արհամարական հայեացք գցեց վարժուհու վրա:

—Օրիորդ Մարիամին միտներդ բերեցիք, հա,

ասաց նա անամօթաբար:—Լաւ, լաւ, երեկոյեանները տղիս կուղարկեմ, եթէ բան-ման չի ունենալ: Չըշմարիտ է ասած՝ աղքատ հպարտ: Ձեզ պատիժ. հիմի ես ինքս փողը չեմ տայ. իսկ սրանք վերցրէք, ահա:

Դրօզդը շապով հեռացաւ, իսկ օրիորդ Աննան մնաց փողոցում կանգնած՝ կապոցը ձեռքին:

Այդ բոլորը օրիորդը պատմեց քահանային: Տէրտէրը գլուխը թափահարեց, և խորհուրդ տուեց զրանից «պատմութիւն չը շինել»:

—Վերցրէք, ասաց նա, եթէ չէք ուզում որ դրանից մի մեծ «պատմութիւն» դուրս գայ: Քեզանից ուժեղի հետ մի ընկնիլ, — առածն էլ այդպէս է ասում: Թէ չէ կասեն՝ ձեզ թանգ էք ծախում. նա էլ, ով գիտէ, ինչ բամբասանքներ կը հնարի: Վերցրէք, թող հալալ լինի ձեզ: Ե՛հ, որդի, թէ՛ կարող ենք անել. մեզանով չի սկսվել, մեզանով էլ չի վերջանալու: Իմ խորհրդին ականջ դրէք, կը տեսնէք, որ միւս գիւղացիներն էլ լաւ աչքով կը նայեն ձեզ վրա:

Եւ ճշմարիտ: Գիւղացիները սկսեցին բարեկամի աչքով նայել վարժուհու վրա: Դրօզդից յետոյ եկաւ տանուտէրը, զրանից յետոյ էլ գիւղի մի քանի իշխանները, ամենքն էլ կապոցներով:

Վարժուհին էլ սկսեց իր երեկոյեան պարապմունքները: Մինչև հինգ-վեց աշակերտներ հաւաքվեցին:

Այդ անտէր կապոցների շնորհով, որոնք կաշառք էին լիշեցնում, օրիորդ Աննան այլ ևս ազատ ժամանակ չուներ: Ժամանակ չը կար, որ մի բան կարգար կամ միւս օրվայ համար պատրաստվէր: Այդ

հերիք չէր. նրա բախտիցը աշակերտները բութ դուրս եկան, այնպէս որ ահագին աշխատանք էր հարկաւոր, նրանց պատրաստելու համար: Մի բան միայն լաւ էր — օրիորդի վրա մատնութիւններ չէին անում, և Դրօզդը, որ իր առևտրական գործերով շուտշուտ քաղաք էր գնում, իր ժամանակին դպրոցական վարձութիւնից վերցնում, բերում էր վարժուհու ռոճիկը: Ինքը տանուտէրը, ժամը դուրս եկած ժամանակը՝ միշտ մօտենում էր վարժուհուն, շնորհաւորում այն օրվայ թօնը և գովում նրան:

—Ա՛յ, վարժուհին ձեզ նման պիտի լինի, ասում էր նա. օրիորդ Մարիամը շատ քիչ էր եկեղեցի գալիս, իսկ դուք նրա նման չէք. Աստուծուն չէք մոռանում, ժամասէր էք:

Սաղ ձմեռը Աննան գլուռը կորցրել էր. չէր կարողանում մէկ խելքը գլուխը հաւաքել և մտածել իր վիճակի մասին: Ապագայի մասին նա, ի հարկէ չէր էլ մտածում. — նրա ապագան այն 15 ռուբլի ամսական ռոճիկն էր, որի շնորհով քաղցած չէր մնում: Բայց թէ՛ էր նրա դրութիւնը: Գիտէր նա, թէ ինչ օր պիտի քաշի վաղը, միւս օրը...

Նա որբ էր. չը գիտէր էլ, թէ ովքեր են եղել իր հայրը և մայրը: Նա ընկեցիկ էր: Փոքր ժամանակը՝ կողովի մէջ դրած՝ տարան գցեցին ուրիշի դռան մօտ: Բարեսիրտ տանտիրուհին խղճաց անտէր երեխայի վրա, վեր առաւ տուաւ Մանկական ապաստանարանը, և վերջումն էլ, երբ մեծացաւ, իր հաշուով ուսումնարան տուեց, որտեղից նա դուրս

եկաւ գիւղական վարժուհու վկայականով: Դրանով բարեսիրտ կինը իր պարտքը կատարած համարեց. ազատ թողեց օրիորդին, որ նա գնայ, ուր ուզում է, տալով նրան մի քիչ ճանապարհածախս և մի քիչ էլ հագուստեղէն: Բախտը օրիորդ Գուբինային գցեց գիւղը: Արդեօք երկար պիտի մնար այդտեղ —նա ինքն էլ այդ մասին չէր մտածում: Մի բան միայն նա լաւ էր հասկանում, որ զբանից յետոյ իր հայրն էլ ինքն է, մայրն էլ. որ իր յոյսը իր վրա պէտք է դնի, և իր դժբաղդութեան ժամանակ՝ ինքը պէտք է տեսնի իր գլխի ճարը: Ուրիշի օգնութեան դիմելու հնար չը կար:—Ո՛ւմ դիմէր. նրա ընկեր աղջիկներն էլ միւսնոյն դառն վիճակի մէջ էին, ինչպէս ինքը: Նրանք ամենքն էլ ցրվել էին այս ու այն կողմը, ամենքն էլ նիւթական և բարոյական միւսնոյն պայմանների մէջ էին, ամենքն էլ պատէ պատ էին ընկնում՝ մի կտոր հացի համար: Աննան մենակներից էլ մենակ էր: Շատ անգամ աշխարհում մենակ մարդն էլ կարողանում է աչնպէս սարքել իր բաները, որ մի «պաշտպան» ունենայ, և ազատ մնայ զանազան պատահմունքներից: Բայց Աննայի մասին ոչ մտածող կար և ոչ էլ նրան լիշող. նրա ամբողջ կեանքը կախված էր միմիայն պատահմունքներից...

Աննան երբէք չէր մտածել, թէ արդեօք ինքը գեղեցիկ աղջիկ է, թէ ոչ: Իսկն ասած, նրա մասին չէր կարելի ասել, թէ գեղեցիկ է, բայց ջահելութիւնը և թարմութիւնը լրացնում էին դէմքի պա-

կասութիւնները: Ինքը գիւղի միրզան աչքը տնկել էր նրա վրա: Բայց որովհետեւ պսակված մարդ էր, քաշվում էր աշկարա կերպով իր սիրտը բաց անելու օրիորդին, այլ դրա փոխարէն, ժամանակ առ ժամանակ, ուղարկում էր նրան իր գրած ոտանաւորները, որոնց մէջ բաւական պարզ կերպով յայտնում էր իր զգացմունքները: Մի անգամ էլ Իրօզդը օրիորդի ականջով գցեց.

—Ե՛հ, օրիորդ, օրիորդ, ձեր քաշովը մէկ ոսկի կը տալի, եթէ...

Կանացի զգացմունքները դեռ նոր էին ըսկսել զարգանալ օրիորդի մէջ: Նա ոչ ոտանաւորների միտքն էր հասկանում, ոչ այդ ականարկութիւնները և ոչ էլ այն թէ՛ ինչ է թաղանթած այդ բոլորի լեռնը: Նրան միայն զարմացնում էր, որ մարդիկ այդքան լիմար և աներես են: Բայց դրա հետ միասին նա այնքան լաւ էր հասկանում՝ թէ ինքը անպաշտպան և անզօր է, որ գլխովն անգամ չէր անցնում՝ գանգատով: Ամենքն էլ գիտէին, որ կարելի է նրան «տոխ տակ տրորել»: Այդ պատճառով, եթէ մինչև անգամ դիմեր էլ, ասենք թէ, հէնց դըպրոցական խորհրդի անդամին՝ որ մի-մի անգամ այցելում էր դպրոցը, և պաշտպանութիւն խնդրէր, նրան կը պատասխանէին. «Ինչ էք միշտ լիմար բաների համար մեր գլուխը տանում, մեր ինչ գործն է»: Ուրիշ ճար չը կար. պէտք էր համբերել, և պինդ պահել այն կտոր հացը, որ բախտը տուել էր: Ասենք թէ հէնց նրա գանգատներին ականջ

դնէին և տեղափոխէին մի ուրիշ տեղ: Միւսնոյն է. գրանից մի լաւ բան չէր գուրս գալ: Այդ նոր տեղըն էլ հին պատմութիւնները կը սկսէին, դեռ, ով գիտէ, հետն էլ մի կեղտոտ բամբասանք, որ այդպիսի դէպքերում մարդիկ անում են, ասելով՝ „եթէ լաւ աղջիկ էր ինչո՞ւ այնտեղ չը մնաց“...

III

Բայց այլ առակ լուարուք: Մինչև այժմ եղածները համեմատաբար մանր-մունր բաներ էին. մեծ գժբաղտութիւնը հեռուից էր մարաղ մտել:

Այրիլ ամսին, բոլորովին անսպասելի կերպով, իր գիւղական կալուածքը եկաւ կալուածատէր Անդրէաս Ալիգին, որ միւսնոյն ժամանակ գիւղի ուսումնարանի գլխաւոր հոգաբարձուն էր: Նա եկել էր, որ իր անտառները ծախի և գրա փողով գնայ և ամառը արտասահման անցկացնի: Թէև այդ բանը շատ շուտով կարելի էր գլուխ բերել, բայց Ալիգինը մտադիր էր մինչև մայիս գիւղում մնալ այն նպատակով, որ համ կալուածքի վերաբերեալ մի քանի հաշիւները տեսնի, համ էլ գիւղը գալուց օգուտ քաղելով՝ նորից բարեկամութիւն կապի տեղական իշխանութեան հետ, և դպրոցին էլ ակ տայ:

Ալիգինը 27 տարեկան, թեթևամիտ և անհոգ երիտասարդ էր: Կարգում ժամանակը շատ վատ էր սովորում: Գլխումը շատ քիչ բան կար. բայց չը նայած գրան, ուսում առած մարդու վկայական ստացաւ, և որովհետև խոշոր կալուածատէրերից

մէկն էր, այդ պատճառով ուսումնարանի հոգաբարձութիւնն էլ, այսպէս ասած, ըստ սովորութեան նրան յանձնվեց:

Վեց տարի էր, ինչ հոգաբարձու էր, և այդ վեց տարվայ մէջ միայն երկու անգամ էր եկել գիւղը և այն էլ շատ կարճ ժամանակով: Գիւղացիք, ինչ ասել կուզի, նրան ընդունում էին այնպէս, ինչպէս վայել է ընդունել ազդեցիկ մարդկանց:

Մի բան միայն չի կարելի չը խոստովանել.— Ալիգինը գեղեցիկ տղամարդ էր. հագնվում էր շատ գեղեցիկ և կարողանում էր ամենքին դուր գալ: Միայն չափից դուրս կոտրտվելը, և միշտ աչքերին պենսնէ դնելը, որ նա սովորութիւն ունէր ամեն րոպէ վերցնել և նորից դնել, մարդու վրա մի փոքր վատ տպաւորութիւն էին թողնում:

Գիւղը գալու հէնց առաջին օրերը Ալիգինը զբնաց դպրոց այցելութեան՝ դպրոցական խորհրդի անդամի, քահանայի և տանուտէրի ուղեկցութեամբ: Տեսաւ դպրոցը, հաւանեց, գովեց կարգ ու կանոնը և այնպէս պինդ նայեց վարժուհուն, որ նա կարմրեց: Դպրոցից դուրս գալիս Ալիգինը ուղղակի ասաց, թէ ինքը շատ ուրախ է, որ իր դպրոցում այդպիսի սիրուն վարժուհի կայ: Եթէ մինչև հիմի ինքը ուշ ուշ էր գալիս, նկատեց նա, գրա պատճառը այն էր, որ բոլոր վարժուհիները կարծէք թէ Աստուածանից պատժված լինէին՝ այնքան տգեղ էին. իսկ այժմ շուտ շուտ կը գայ: Վերջումն էլ աւելացրեց, որ ճիշտն ասած, օրիորդ Աննայի տեղը այդ

1002
5648

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՏԱՆԲՈՒԼ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՏԱՆԲՈՒԼ

յետ ընկած անկիւնը չէ, այլ մայրաքաղաքը, և խօսք տուեց, որ ինքը կաշխատի այդ մասին:

Նոյն օրը Ալիգինը ճաշկերոյթ տուեց: Չաշին հրաւիրված էին այն բոլոր մարդիկ, որոնք մօտիկ էին դպրոցին՝ և դոցա թւումն էլ՝ օրիորդ Աննան:

Այդ օրից սկսած երիտասարդ հոգաբարձուն մաշում էր դպրոցի շէնքը: Նստում էր դասերի ըսկզբից մինչև վերջը, և աչքը գցում վարժուհուն: Մնաս բարով ասելիս, այնպէս պինդ էր սեղմում օրիորդի ձեռքը, որ նրա սիրտը սկսում էր թունդ թունդ խփել: Նա աշխատում էր օրիորդի սիրտը իր վրա տաքացնել ոչ թէ զանազան քաղցր խօսքերով և ակնարկութիւններով, այլ ուղղակի իր գեղեցկութեամբ և ջահէլութեամբ:

Նրանք երկուսն էլ ջահէլ էին. երկուսի մէջ էլ արիւնը եռ էր գալիս: Ալիգինը այցելեց մինչև անգամ օրիորդի տնակը, և գովեց որ նա կարողացել է տեղաւորվել մի այդպիսի ողորմելի բնակարանում:

— Ինչո՞ւ դուք խսկի ինձ մօտ չէք գալիս, վախենում էք թնչ է:

— Ի՞նչ կայ վախենալու, պատասխանեց օրիորդը՝ ամբողջ մարմնով դողալով:

— Ուրեմն . . .

Ալիգինը խօսքը չը վերջացրեց, բռնեց օրիորդի ձեռքը և համբուրեց: Այդ գէպքից յետոյ, սաղ օրը՝ մինչև երեկոյ, օրիորդը կարծէք կրակի մէջ էր: Նա ինքն էլ չէր հասկանում թէ ինչ եղաւ իր հետ: Նրա սիրտը այրվում էր, բայց ինքն էլ չըգիտէր՝

ուրախութիւնից թէ տխրութիւնից: Գլխովը հազար ու մի միտք էր անցնում. անհանգիստ կերպով սենեակի մի անկիւնից միւսն էր վազում, մի բան վերցնում մի ուրիշ տեղ էր դնում, բայց էլի չէր իմանում թէ ինչ անի:

Վերջապէս երբ մութն ընկաւ, Ալիգինի տանից մարդ եկաւ և ասաց, որ պարոնը խնդրում է շնորհ բերել՝ մի թաս թէյ վաճելու:

„Այսպէս շուտ . . .“ մտածեց օրիորդը: Այդ ըոպէին նա այնպէս յոգնած զգաց իրան, սիրտը այնպէս էր խփում, որ լուսամուտը բաց արեց, որպէս զի քիչ հովացնի իր տաքացած երեսը և գլուխը:

Կէս ժամից յետոյ նա արդէն Ալիգինի տանն էր:

IV

Օրիորդի «պատմութիւնը» երկար չըքաշեց: Մի շաբաթից յետոյ Ալիգինը պատրաստվեց ճանապարհ ընկնելու. նրա գնալը նոյնքան անսպասելի եղաւ, որքան և գալը: Նա շատ էլ քնքոյշ, փափուկ չէր վարվում օրիորդի հետ. ոչինչ խոստմունք չըտուեց. մի խօսք անգամ չասաց այն մասին, թէ իրանք էլի մի ժամանակ կըտեսնվեն, և միայն մի անգամ հարցրեց, թէ արդեօք որեիցէ կարօտութիւն ունի: Ինչ խօսք, որ օրիորդը ասաց՝ չէ: Նոյն իսկ ճանապարհ ընկնելիս՝ նա չը գնաց օրիորդին մնաս բարով ասելու, այլ միայն, երբ կառքը դպրոցի մօտով անցնում էր, իջաւ, թխկթխկացրեց պատուհանը և ասաց.

—Կը տեսնվենք:

Օրիորդը մի քանի քալ արեց որ դուրս գայ նրա առաջը, բայց իրան պահեց, և պատասխանի փոխարէն՝ թույլ կերպով ժպտաց:

Այդպիսով յաղթութիւնը շատ էփան նստեց Ալիգիւնին: Նա մի զգուելի, գարշելի գործ գործեց, և ինչպէս երևում էր, իսկի չը զգաց էլ, թէ իր արածը զգուելի և գարշելի էր:—Ո՛վ է, ինչացու է այդ օրիորդը, որ մարդ նրա համար խղճահարկի: Ինքը նրան փող առաջարկեց, իսկ նա մերժեց. ո՞վ ինչ անի: Միայն ինքը չէ այդպէս անողը, ամենք էլ այդպէս են անում: Դեռ լաւ է, որ առանց լացի, առանց յանդիմանութեան անցաւ: Դա նշան է, որ Աննան լիմար աղջիկ չէ:

Դժբախտաբար, զիւղում արդէն ամենքը գիտէին, որ վարժուհին երեկոյեանները գնում գալիս է Ալիգիւնի մօտ, և գլխի էին ընկել թէ բանն ինչումն է: Փողոցում նրան պատահած ժամանակ, զիւղի ջահէլները միմեանց աչքով էին անում, հասակաւորները՝ սրախօսութիւններ: Իսկ զիւղացի կանայք խօսմ վաղուց աչքով աչք չունէին նրան տեսնելու. նրանք տեսնում էին որ վարժուհու աչքում լոյս կայ, և կարող է իրան մարկանց խելքահան անել: Բանը այնտեղ էր հասել, որ զիւղի միրգան մի անգամ ուղղակի հարցրեց. «Օրիորդ, երբ կարող եք ինձ ընդունել»: Իսկ Դոօգը, որ այդ հարցը տալիս ներկայ էր, աւելացրեց. «Ի՞նչ ես հարցնում. դնա՛, երբ քէֆդ տալիս է,—սլըծաւ դնաց»:

Տէրտէրն էլ, չընայած իր բարեսրտութեանը, սկսեց կասկածել և մի անգամ՝ ճաշի ժամանակ յայտնեց օրիորդին, որ սրանից յետոյ էլ չի կարող նրան ճաշ տալ:

—Խեղճս էք գալիս,—ասաց քահանան. բայց ի՞նչ անեմ, հոգևորական մարդ եմ, ինձ չի սագում...

Տէրտէրակինն էլ ախ ու վախ քաշեց, և աչքերիցն էլ մի քանի կաթիլ արտասուք թափեց:

Միայն դպրոցի ծառան էր, որ երեսը շուռ չըտուեց նրանից: Երբ օրիորդը, քահանայի մօտից, գունաթափ և հազիւ շունչը բերանին վերադարձաւ տուն, նա ասաց.

—Բան չըկայ: Համբերեցէք. Աստուած Համբերեց և մեզ էլ հրամայեց որ համբերենք: Կարծում եք ես չեմ կարող ձեզ համար կերակուր եփել, ի՞նչ է:

Այդ բոլորը բաւական չէր, և ահա օրիորդը զգաց որ ինքը... յղի է: Նրան միանգամից այնպէս թւաց, որ ինքը կանգնած է մի մեծ փոսի առաջ: Աչքերը մթնեցին, գլուխը շշմեց, ոտք ու ձեռքը դողում էին, սիրտը տակն ու վրա էր լինում: Նա ամեն բան մոռացաւ: Նրա աչքերի առջևից մի միտք միայն չէր հեռանում. «Ես կորած եմ»:

Բարեբախտաբար ամառվայ արձակուրդը վրա հասաւ, և այդպիսով օրիորդը կարող էր սենեակում նստել և դուրս չըգալ: Բայց դրա հետ միասին նա լաւ հասկանում էր որ աշխարհից կտրված լինելն էլ նրան չի փրկիլ: «Ես կորած եմ». —ահա այդ երեք բառի մէջ էր նրա ամբողջ ապագան: Տօն օ-

րերին գիւղի ջահէլ-ջիւհիւնները խմբով գալիս կանգնում էին վարժուհու տան առաջ և զոռում:

—Շնորհաւոր լինի պտուղդ:

Օրիորդի համար գեռ մի ելք կար.—մտնեգիւղի մի մերգայի, Դրօզդի, կամ մի ուրիշ ազգեցիկ մարդու հովանաւորութեան տակ: Բայց նա սարսափում էր, երբ մտածում էր՝ թէ ինչ կը լինի իր դրութիւնը դրանց ձեռքում, և յուսահատութիւնից սկսում էր սենեակի մէջ գոռածի նման այս ու այն կողմ վազել, մատները կոտրտել, գլուխը պատին խփել: Այդպէս էր անցկացնում ցերեկը, իսկ գիշերներն էլ սարսափելի երազներ էր տեսնում:

Մտածեց, մտածեց, և վճռեց ամառը գնալ քաղաք, նախորդ վարժուհու՝ օրիորդ Մարիամի մօտ, թէև նրա հետ ծանօթ էլ չէր: Գիշեր ժամանակ քսան վերստ ճանապարհ անցաւ: Ճանապարհին մի ինչ որ բանի մասին մտածում էր, բայց ինքն էլ չըզիտէր, թէ ինչո՞ւ համար է գնում: „Ես կորած եմ“.—ահա նրա միակ մտածմունքը:

Օրիորդ Մարիամը սիրով ընդունեց նրան, բայց ուղղակի ասաց, որ նա մեղաւոր է:

—Այդ բանը, քոյրիկ, մարդիկ շատ դժւար են մոռանում և ներում, ասաց օրիորդ Մարիամը: Ճշմարիտ է, նրա խօսքերի մէջ յանդիմանութիւն չը կար, բայց Աննան հասկացաւ, որ ի գուր է օգնութիւն սպասելը:

—Ի սէր Աստծոյ, օգնեցէք:

Օրիորդ Մարիամի սիրտը շարժվեց: Նա խօսք

տւեց, որ կը խնդրի գիշերօթիկ դպրոցի պահող կընօջը, որն այդ ժամանակ ամառանոց էր գնացել, թէ չի՞ կարելի այնպէս անել, որ „յանցաւորը“ իբրև հասարակ աղախին, նոյն իսկ առանց ռոճիկի, ապրի նրա տանը մի քանի ամիս, մինչև որ լոյս աշխարհ կը գայ նրա „յանցանքը“:

—Մինչև արձակուրդը չըվերջանայ, նա ձեզ չի վերցնիլ, նրան ձեռնառու չէ ձեզ հաց տալ պահել: Իսկ յետոյ կարելի է որ... Այսպէս թէ այնպէս, աւելացրեց օրիորդ Մարիամը, ես այս օրերս կը տեսնեմ նրան և ձեզ մի պատասխան կը տամ:

Նոյն օրը փողոցով անցնելիս՝ Աննան պատահեց դպրոցական խորհրդի մի անդամին, որի հետ ծանօթ էր: Նայելով օրիորդի վրա՝ նա անամօթաբար ժպտաց և ասաց.

—Ձեր մասին խորհրդի ականջին վատ լուրեր են հասնում: Եթէ այդ բոլորը ճշմարիտ է, խորհուրդ եմ տալիս անել, ինչ որ հարկաւոր է:

Եւ խօսքը չըվերջացրած, գլխարկի ծալքով բարեկեց և անցաւ:

Օրերն օրերի յետևից անցնում էին, բայց օրիորդ Մարիամից ոչինչ լուր չէր գալիս. կամ մոռացել էր, կամ ոչինչ չէր կարողացել անել: Դպրոցական խորհրդից էլ ոչինչ կարգադրութիւն չը կար:

Վերջապէս սեպտեմբեր ամիսն եկաւ, և ուսումնարանը նորից բացվեց:

Օրիորդը թէև հազիւ էր կարողանում ոտների վրա կանգնել, բայց դպրոցից յետ չէր մնում: Սա-

կայն չընայած դրան, աշակերտներն էլ գլխի ընկան թէ բանն ինչու՞մն է, և պարծենում էին որ վարժուհին չի համարձակվիլ իրանց մի մագին դիպչել: Դասատան մէջ սկսվեցին անկարգութիւններ, աղմուկ, չարութիւններ: Աշակերտներից մի քանիսը պարզ կերպով ասում էին. „Շնորհաւոր լինի պտուղը“... Մի քանիսներն էլ հաւատացնում էին, որ զալ բարեկենդանին իրանք կ'ունենան ո՛չ թէ մէկ, այլ միանգամից երկու վարժուհի: Օրիորդի դրութիւնը, քանի գնում, անտանելի էր դառնում:

Եկաւ նոյեմբեր ամիսը. սկսվեցին աշնանային խաւար, տիուր գիշերները: Լուսնեակ չկար: Օրիորդի սիրտը կտոր-կտոր էր լինում: Նա այնպէս էր տանջվում, որ էլ ոյժ չունէր դիմանալու...

Մի անգամ նա տանից՝ դուրս եկաւ և գնաց դէպի գետը, ջրաղացի կողմը: Գետը ակեկոծվում և փրփրում էր: Վարար անձրև էր գալիս: Մութն էր. միայն ջրաղացի ալիւրով պատած պատուհաններից երևում էր աղօտ լոյս և լսվում էր ջրաղացքարի թխկթխկոցը: Չորս կողմը ամայի էր, մռայլ և խաւար:

Օրիորդը մօտեցաւ գետին, բարձրացաւ ջրաղացի մօտ շինած կամուրջը, և գլխիվայր իրան գցեց գետը....

Նա թառամեց, դեռ չըբացված: Թ.սռամեց անարգար կերպով, անթօրէն, ի զուր....



Լ ո լ ս ա ե ս ա ն

Ժողովրդական ընթերցանութեան համար հետեւեալ գրքերը

ԱՅՆՏԵՂ, ԵՒ ԱՅՍՏԵՂ, Գ. Արծրունու .	10 Կ.
ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի	50 Կ.
ԱՐՆԱԳԻՆ, Լէօի	7 Կ.
ՊՍՏԻԿ Է ԲԱՅՅ ԶՍՏԻԿ Է, Լուսկեզի .	5 Կ.
ԼԻՐ ԹԱԳԱՌՈՐ.	5 Կ.
ԻՆՉ Է ԿԱՅԾԱԿԸ.	5 Կ.
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ.	5 Կ.

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ

Գիմեւ. Թիֆլիս,

Խ. Մալումեան

4166

2013

